

Հաստատված է ՀՀ վիճակագրության  
պետական խորհրդի 23.12. 2009թ.  
թիվ 05-Ա որոշման

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆԵՐԻ ԻՆՂԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆԵՐԻ ԻՆՂԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի (ԱԱԳԻ) հաշվարկման կարգի մեթոդաբանությունը նպատակաուղղված է արդյունաբերության ոլորտի<sup>1</sup> կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների մակարդակի և փոփոխության վիճակագրական դիտարկման ապահովմանը:

Գների մակարդակի փոփոխությունը տնտեսական իրավիճակը նկարագրող կարևոր բնութագրիչներից է և դրա համալիր գնահատման համար անհրաժեշտ է ընդհանրական ցուցանիշ, ինչը և հանդիսանում է գների ինդեքսը: Այն հնարավորություն է տալիս համաչափելու այնպիսի իրավիճակներ, որոնք ֆիզիկական և տեխնիկական սկզբունքներով հնարավոր չէ համադրել: Գոյություն ունեն այդպիսի իրավիճակների երեք համեմատականներ՝ գների համադրելիությունը ժամանակի մեջ, տարածության մեջ և ըստ իրենց բովանդակության (այսինքն՝ տարբեր ապրանքների նկատմամբ):

Արդյունաբերողների արտադրանքի գների վիճակագրության ցուցանիշների համակարգը ձևավորվում է իրար փոխկապակցված և լրացնող ցուցանիշների հետևյալ համակցությամբ.

ա) ինչպես անմիջական գնային, այնպես էլ կառուցվածքային գործոնների ազդեցության տակ արտադրողների միջին գների ձևավորմամբ՝ նոր արտադրատեսակների ի հայտ գալով և հների արտադրության դադարեցմամբ, տարբեր գնային մակարդակներով առանձին արտադրանքների կշիռների փոփոխմամբ, սեզոնային տատանումներով և այլն,

բ) արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսով՝ բնութագրող գների փոփոխությունը ժամանակի մեջ արտադրության անփոփոխ կառուցվածքի պայմաններում:

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը հաշվարկվում է արդյունաբերության ոլորտի բազային կազմակերպություններում (ընտրանքային միավոր) թողարկված արտադրանք-ներկայացուցիչների գների գրանցման հիման վրա: Այն կիրառվում է տնտեսության մեջ գնային փոփոխությունների ուսումնասիրման և բնութագրման, հիմնական միջոցների վերագնահատման, վարձակալական վճարների դրույքաչափերի վերանայման, արդյունաբերական կազմակերպությունների միջև պարտքերի ինդեքսավորման համար և այլն:

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը բնութագրում է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների փոփոխությունը ժամանակի ընթացքում առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի հաշվարկման և կարող է օգտագործվել արդյունաբերության առանձին ճյուղերի կազմակերպությունների գների փոփոխման համեմատական վերլուծության, գնաճի պայմաններում անփոփոխ գներով արդյունաբերական արտադրանքի ծավալների և համախառն ներքին արդյունքի գնահատման, ինչպես նաև տնտեսագիտական այլ հաշվարկներ կատարելու համար:**

<sup>1</sup> Ներառում է տնտեսական գործունեության տեսակների Շայաստանի դասակարգչի (S9S79) խմբ.2, B,C,D,E բաժինները:

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ԳՆԵՐԻ ԻՆՏԵՔՍԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

ԱԱԳԻ հաշվարկներն իրականացվում են հետևյալ փուլերով.

1. արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների ընտրանք,
2. արտադրատեսակների ընտրանք,
3. գնային տեղեկատվության գրանցում և հավաքագրում,
4. գլխավոր համախմբից արտադրատեսակների ընտրանք,
5. ագրեզացման տարբեր մակարդակներում ցուցանիշների կշռման համակարգի ձևավորում,
6. արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկ,
7. գների ինդեքսների հրապարակում:

## 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ

Արդյունաբերական արտադրանքի գների մակարդակի և դրանց փոփոխության դիտարկումն իրականացվում ընտրանքային կարգով ընտրված բազային կազմակերպությունների կողմից ներկայացրած «Արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների կողմից թողարկված արտադրանքի գների հաշվառման մասին (թիվ 1-Գին (տարեկան))» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի (հաստատված Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004թ. մարտի 5-ի թիվ 10-Ն որոշմամբ) տվյալների հիման վրա:

Բազային կազմակերպությունների ընտրանքը կատարվում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎՕ) կողմից: Մասնակի դեպքերում հաշվի են առնվում նաև համապատասխան բաժինների և տարածքային վիճակագրական մարմինների կարծիքը, նրանց կողմից արված լրացուցիչ առաջարկությունները և անհրաժեշտության դեպքում որոշ արդյունաբերական կազմակերպություններ, որոնք բնութագրում և արտացոլում են տվյալ տարածքի արդյունաբերական ճյուղերի ամբողջությունն ու յուրահատկությունը, ներգրավվում են ընտրանքում:

Հետազոտման համար ընտրվում են տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (այսուհետ՝ ՏԳՏՀԴ) հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման, մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման բաժիններին համապատասխան տնտեսական գործունեություն իրականացնող առավել բնորոշ կազմակերպությունները:

Միևնույն ժամանակ, ընտրանքում չեն ընդգրկվում այն կազմակերպությունները, որոնց արտադրանքն ունի ժամանակավոր բնույթ և արագ փոփոխվում է:

Արդյունաբերական կազմակերպությունների ընտրանքը սովորաբար իրականացվում է կշիռների նորացման (թարմացման) հետ միաժամանակ՝ 3-5 տարին մեկ անգամ:

Ընտրանքի համար սկզբնաղբյուր են համդիսանում ՀՀ ԱՎՕ արդյունաբերության վիճակագրության բաժնի կողմից վիճակագրական հետազոտությունների արդյունքում ստացված.

- արդյունաբերական արտադրանքի ծավալն ընթացիկ և համադրելի գներով ըստ գործունեության տեսակների (աղյուսակ 1, սյունակ 4) տարեկան ամփոփ տեղեկատվությունը,
- արդյունաբերական միավորների թողարկված արտադրանքի տարեկան ծավալները հաշվետու տարվա հաստատագրված (համադրելի) գներով (1-Արտ (տարեկան) հաշվետվական ձևի՝ 810-1 տող):

Ըստ ՏԳՏՀԴ-ի ենթադասերի ծածկագրված կազմակերպությունների բազայից ընտրվում են այն արդյունաբերական միավորները, որոնց կողմից թողարկված արտադրանքի հաստատագրված (ներառյալ պատվիրատուի հումքի արժեքը) ծավալների տեսակարար կշիռները իրենց դասի մեջ կազմում են 5 և ավելի տոկոս:

## 2. ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ

Գների գրանցման համար արտադրատեսակների ընտրանքն իրականացվում է հետևյալ նպատակներով.

- միջին գների որոշումն առանձին արտադրանքների համար, որոնք իրենցից ներկայացնում են նմանատիպ արտադրատեսակների համախմբեր,
- արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկ ըստ ընտրված արտադրանքների,
- ամփոփ ինդեքսների հաշվարկ ըստ ՏԳՏՀԴ-ի ստորակարգության աստիճանների և որպես հանրագումար՝ ամբողջ արդյունաբերության:

Արտադրատեսակների ընտրանքի հիմնական սկզբունքը հանդիսանում է արտադրանքների ներկայացուցչականության ապահովումը դասի, հատվածի, ենթաբաժնի և բաժնի մեջ: Հետագոտման համար արտադրատեսակների ճիշտ և ներկայացուցչական ընտրանքից մեծապես կախված է հաշվարկվող գների ամփոփ ինդեքսների ճշգրտության աստիճանն ազդեցացման բոլոր մակարդակներում:

Գների դիտարկման համար կազմակերպության կողմից արտադրատեսակներն ընտրվում են ելնելով հետևյալ սկզբունքներից.

- արտադրատեսակի արտադրությունը նախատեսված պետք է լինի երկարատև ժամանակով,
- արտադրատեսակը պետք է ներկայացուցչական լինի տվյալ կազմակերպության արտադրության ընդհանուր ծավալում,
- եթե հնարավոր չէ առանձնացնել արտադրատեսակներն առանձին տարատեսակներով՝ արտադրվածի տիպով (արտիկուլով), ապրանքապիտակով (մարկայով, մակնիշով), ապա կարելի է միատիպ արտադրատեսակները խմբավորել որպես առանձին արտադրանք, որտեղ մեկ արտադրատեսակի արտադրության ծավալների կառուցվածքային տեղաշարժերն ու գների տատանումներն էական ազդեցություն չեն ունենում տվյալ արտադրանքի միջին կշռված գնի դինամիկայի վրա,
- գների գրանցման ժամանակ պետք է հաշվի առնել ինչպես արտադրանքի (տեսականու) նշանակությունը (օրինակ՝ կոշիկ – մանկական, կանանց, տղամարդկանց, ճտքավոր, կիսաճտքավոր, ամառային, ձմեռային), այնպես էլ օգտագործված հումքի տեսակը՝ բնական կաշվից, արհեստական կաշվից և այլն,
- արդյունաբերության այն ճյուղերում, որտեղ արագ են նորացվում արտադրատեսակները կամ կան արտադրանքի բազմազան տեսականիների խմբեր (հագուստի, կոշիկի, հրուշակեղենի և այլն) անհրաժեշտ է տարանջատել և գների գրանցումն իրականացնել այդ խմբերի մեջ մտնող մի քանի տեսականիների համար առանձին-առանձին:

Կազմակերպության կողմից ներկայացված (կամ ընտրված) ներկայացուցչական արտադրատեսակների գին և քանակ ցուցանիշների հիման վրա հաշվարկվող արտադրության ծավալների հանրագումարը պետք է կազմի տվյալ կազմակերպության թողարկած արտադրանքի ընդհանուր ծավալի առնվազն 60%-ը:

Եթե հաշվետու տարվա ընթացքում սկսվում է նոր արտադրատեսակի թողարկում, որի արտադրությունը նախատեսված կլինի երկարատև ժամանակով և կունենա թողարկման արտադրության մեծ ծավալ, ապա անհրաժեշտ է ընդգրկել ներկայացուցչական արտադրատեսակների ցանկում և ներառել հաշվետվությունում:

## 3. ԳՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

Գնային տեղեկատվությունը ներկայացվում է ձև թիվ-1Գին (արտադրանք) (ամսական) վիճակագրական հաշվետվության հիման վրա:

Հաշվետվությունը ներկայացնում են ՀՀ ԱՎԾ կողմից ընտրանքային կարգով ընտրված արտադրական գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձինք (այսուհետ՝ կազմակերպություններ), անհատ ձեռնարկատերերը, որոնք նախապես գրավոր իրազեկվում են ՀՀ ԱՎԾ-ի կողմից տվյալների ստացման անհրաժեշտության, դրանց օգտագործման խնդիրների և նպատակների, ներկայացվող տեղեկատվության կարևորության մասին:

Հաշվետվությունը լրացվում և ամսական պարբերականությամբ ներկայացվում է ՀՀ ԱՎԾ կամ ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություն (տարածքային բաժին) ձևում նշված ժամկետում: Կազմակերպությունը (անհատ

ձեռնարկատերը) իր մոտ պետք է ունենա ներկայացվող հաշվետվության կրկնօրինակը հաշվառման և համակարգման համար:

Լրացված հաշվետվական ձևը ստորագրում է կազմակերպության ղեկավարը (անհատ ձեռնարկատերը), գլխավոր հաշվապահը: Նշվում է նաև կատարողի (գլխավոր հաշվապահի կամ դրա համար լիազորված այլ աշխատակցի) ազգանունն ու հեռախոսի համարը, կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն:

Վիճակագրական մարմինները պահպանում են կազմակերպությունների (անհատ ձեռնարկատերերի) կողմից ներկայացված առանձին արտադրատեսակների գների մասին տվյալների գաղտնիությունը: Ստացված տվյալներն օգտագործվում են միայն վիճակագրական նպատակով, մասնավորապես գների ամփոփ ինդեքսների հաշվարկման համար:

Վիճակագրական տեղեկությունների ներկայացման հետ կապված այլ հարցերը կարգավորվում են «Պետական վիճակագրության մասին» ՀՀ 2000թ. ապրիլի 4-ի ՀՕ-48 օրենքով սահմանված կարգով, ՀՀ ՎՊԽ կողմից հաստատված «Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրով» և ՀՀ ՎՊԽ 2003թ. հոկտեմբերի 3-ի «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին թիվ 11-Ն» որոշմամբ հաստատված կարգով:

Վիճակագրական ձևը նախատեսված է «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի» հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման, մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման բաժիններին համապատասխան տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար:

Անհրաժեշտության դեպքում գների դիտարկում և գրանցում կարող են կատարվել նաև վիճակագրական մարմինների աշխատողների կողմից՝ անմիջապես բազային կազմակերպություն այցելելով:

Արտադրատեսակների մասին պահանջվող տվյալները պետական վիճակագրական հաշվետվական ձևում բերվում են սահմանված օրացուցային ժամանակահատվածի համար և ներկայացվում ՀՀ ԱՎԾ-ի կողմից հաստատված ժամկետում: Հաշվետվության մեջ յուրաքանչյուր արտադրատեսակի համար գրանցվում է հաշվետու ամսվա 1-ից մինչև նույն ամսվա վերջին օրը ներառյալ **արտադրողի փաստացի բացթողման միջին կշռված գինն առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի և արտադրված արտադրատեսակի փաստացի քանակը բնաիրային արտահայտությամբ:**

Ընտրված արտադրատեսակների գների գրանցումը կատարվում է մշտապես, ամբողջ տարվա ընթացքում, անվանացանկին խիստ համապատասխան: Նախորդ ամիսների տվյալների ճշգրտման դեպքում հաշվետվությանը կից տրվում են պարզաբանումներ:

Հաշվետվության լրացման համար հիմք են հանդիսանում հաշվետու ժամանակաշրջանում արտադրանքի վերաբերյալ կամ արտադրանքի առաքման պայմանագրերով նախատեսված արտադրողի փաստացի բացթողման (շուկայական) գների մասին տեղեկություններն առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի, ներառյալ սուբսիդիաները:

Երկարատև ցիկլով արտադրանքների արտադրության համար, որոնց բեռնառաքումը մի քանի ամսվա ընթացքում չի կատարվել, վիճակագրական հաշվետվությունը լրացվում է առաքման համար կնքված փաստաթղթերում առկա գների մասին տվյալների հիման վրա: Առաքման կամ այլ պայմանագրերով նախատեսված գների փոփոխման պարագայում վիճակագրական հաշվետվությունում լրացվում է փոփոխված գինը:

Գրանցվող (հաշվարկվող) միջին կշռված ամսական գնի կազմում չեն ներառվում արտադրության գնից բարձր կազմակերպության լրացուցիչ ծախսերը, որոնք բերվում են վճարման փաստաթղթերում: Օրինակ՝ արտադրանքի արտադրության գնի մեջ չպետք է ներառվեն վճարման փաստաթղթերում բերված փոխադրման, ապահովագրման և այլ ծախսերը, որոնք չեն նախատեսվել արտադրողի արտադրանքի գնի մեջ և վճարվում են պատվիրատուի կողմից առանձին:

Արտադրողի արտադրանքի գնի մեջ չի մտնում տարայի արժեքը, եթե այն վերադարձվում է գնորդի կողմից:

Գների զգալի փոփոխության (տատանումների) դեպքում հաշվետվության «գնի փոփոխության պատճառը (ծածկագիրը)» բաժնում կազմակերպության կողմից լրացվում են նախորդ ամսվա նկատմամբ գնի փոփոխության պատճառները (օրինակ՝ հումքի, նյութերի և կիսաֆաբրիկատների վրա կատարած ծախքերի փոփոխություն, ֆիզիկական բաղադրության փոփոխություն, մրցակցային գործոն, վաճառքի պայմանների փոփոխություն, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, վառելիքի գնի (սակագնի) փոփոխություն, արտադրության փոփոխություն, աշխատուժի վարձավճարի փոփոխություն կամ այլ պատճառներ):

Գների գրանցման պարագայում հաշվետու ժամանակաշրջանում թողարկված, բայց չիրացված (կազմակերպության սեփական կարիքների համար նախատեսված, պատրաստի արտադրանքի պաշարները համալրած) արտադրատեսակների գինը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանում նմանատիպ արտադրատեսակի շուկայական գնով:

Ամբողջությամբ կամ մասամբ պատվիրատուի հումքով աշխատող կազմակերպությունները գների գրանցումը պետք է իրականացնեն հումքի և հումքի մշակման ծառայության (տոլինգային ծառայության) մասով, որպես առանձին արտադրատեսակներ: Վիճակագրական ձևում արտադրատեսակի անվանման լրացման հետ միասին փակագծերում նշել «հումք» կամ «ծառայություն» բառերը:

Եթե նույն արտադրատեսակն իրացվում է և՛ ներքին և՛ արտաքին (արտահանվում է) շուկաներում, ապա դրանք տարանջատվում են որպես երկու առանձին արտադրատեսակներ:

Գների գրանցման և ինդեքսների հաշվարկման ժամանակ զգալի դժվարություններ կապված են արտադրատեսակի արտադրության և վաճառքի ժամանակավոր դադարեցման հետ: Մասնավորապես, ժամանակավոր բացակայող արտադրատեսակների գների ցուցանիշների հաշվարկման ամենատարածված մեթոդը գնահատված կամ հաշվարկային գների օգտագործումն է մինչև փաստացի գների մասին տվյալների ի հայտ գալը, ինչը հնարավորություն է տալիս ապահովել ինդեքսների շարքերի անընդհատությունը հաշվարկման բոլոր մակարդակներում: Բացակա արտադրատեսակի գնի հաշվարկման համար օգտագործվում են համանման արտադրատեսակների գների միջին երկրաչափականի փոփոխությունը, իսկ ավելի բարձր մակարդակներում՝ գների միջին փոփոխությունների մեծությունները (գների ինդեքսները):

Չի խրախուսվում բացակայող արտադրատեսակի գնի փոխարեն նախորդ ամսվա գնի կրկնելը:

Արտադրատեսակի արտադրության դադարեցման պարագայում, փոխարինումը համանման նոր արտադրատեսակով (նախապես խորհրդակցելով արտադրող կազմակերպության հետ), թույլատրվում է միայն այն դեպքում, երբ այն բացակայում է չորս և ավելի ամիս, որը կապված չէ հանրապետությունում էներգետիկ, տրանսպորտային և ժամանակավոր այլ սահմանափակումների հետ:

Փոխարինումն իրականացվում է գների տեղադրման մեթոդի հիման վրա, «նոր գների» ստացման համար օգտագործելով հին արտադրատեսակի անհատական ինդեքսները՝ վերահաշվարկելով փոխարինվող ժամանակահատվածից մինչև բազիսային տարվա հունվար ամիսը ներառյալ:

*Օրինակ՝ (տվյալները պայմանական են)*

| տարեթիվ | ամիսներ | Հին արտադրատեսակ «Ա»                                |                    | Նոր արտադրատեսակ «Բ» |   |
|---------|---------|---|--------------------|----------------------|---|
|         |         | գների անհատական ինդեքսները նախորդ ամսվա նկատմամբ, % | միավորի գները      | միավորի գները        | արտադրատեսակ «Ա»-ի գների ինդեքսներով վերահաշվարկված արտադրատեսակ «Բ»-ի հաշվարկային գներ |
|         |         |   | 172.2 <sup>2</sup> |                      |   |
| 2007թ.  | Հունվար | 99.1 <sup>3</sup>                                   | 170.7              |                      | <b>190.4</b>  |
|         | Փետրվար | 93.8  | 160.0              |                      | <b>178.5</b>  |
|         | Մարտ    | 132.0   | 211.2              |                      | <b>235.6</b>  |
|         | Ապրիլ   | 101.2   | 213.7              |                      | <b>238.4</b>  |
|         | Մայիս   | 99.9  | 213.4              |                      | <b>238.1</b>  |
|         | Հունիս  | 98.1  | 209.3              |                      | <b>233.5</b>  |
|         | Հուլիս  | 72.0  | 150.6              |                      | <b>168.0</b>  |

<sup>2</sup> Բազիսային տարվա միջին կշռված գինն է:

<sup>3</sup> Հունվար ամսվա ինդեքսը հաշվարկվում է բազիսային տարվա միջին կշռված գնի նկատմամբ:

|        |           |       |       |       |              |
|--------|-----------|-------|-------|-------|--------------|
|        | Օգոստոս   | 127.5 | 192.0 |       | <b>214.2</b> |
|        | Սեպտեմբեր | 71.1  | 136.6 |       | <b>152.4</b> |
|        | Հոկտեմբեր | 99.6  | 136.1 |       | <b>151.8</b> |
|        | Նոյեմբեր  | 97.7  | 133.0 |       | <b>148.4</b> |
|        | Դեկտեմբեր | 105.3 | 140.1 |       | <b>156.3</b> |
| 2008թ. | Հունվար   | 85.7  | 120.1 |       | <b>134.0</b> |
|        | Փետրվար   | 92.8  | 111.5 |       | <b>124.3</b> |
|        | Մարտ      | 89.9  | 100.2 |       | <b>111.8</b> |
|        | Ապրիլ     | 102.7 | 102.9 | 114.8 | 114.8        |
|        | Մայիս     |       |       | 114.6 | 114.6        |
|        | ...       |       |       | ...   | ...          |

$$\frac{114.8}{102.7} \% = 111.8 \text{ (մարտ 2008թ.)}$$

#### 4. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՆՄԲԻՑ ԱՐՏԱՊՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ

Բազիսային տարվա գլխավոր համախմբից արտադրատեսակների ընտրանքը ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի կողմից իրականացվում է հետևյալ փուլերով: Ընտրվում են 12 ամսվա ընթացքում 8 և ավելի ամիսներ գնային տեղեկատվություն ունեցող արտադրատեսակները: Այնուհետև, բազիսային միջին կշռված գնի նկատմամբ ըստ ամիսների հաշվարկվում է յուրաքանչյուր արտադրատեսակի գնային տատանումը.

$$I_{it} = \frac{P_{it}}{P_{oi}} \%,$$

որտեղ  $I_{it}$  -  $t$ -րդ ամսում  $l$ -րդ արտադրատեսակի գնային տատանումն է,

$P_{it}$  -  $t$ -րդ ամսում  $l$ -րդ արտադրատեսակի գինն է,

$P_{oi}$  -  $l$ -րդ արտադրատեսակի բազիսային միջին կշռված գինն է:

Արտադրատեսակների գնային տատանումների հաշվարկված շարքերը կարող են լինել անկանոն ի հաշիվ առանձին արտադրատեսակների գների էական տատանումների: Նման կարգի գնային շեղումներից խուսափելու համար օգտագործվում է ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդը՝ սահմանային գործակիցների կիրառմամբ: Այն արտադրատեսակները, որոնք ունեն հաշվարկված սահմանային գործակիցից ավելի գնային տատանումներ (նվազման կամ աճման միտումով) չեն մասնակցում հետագա հաշվարկներին: Սահմանային գործակիցների ընտրությունը հաստատվում է գնային տիպիկ տատանումների (տարբեր միջակայքերում) բազմաթիվ ուսումնասիրություններից հետո: Ինդեքսի սահմանային արժեքները հաստատվում են այնպես, որ ապահովեն գնային փոփոխության ճշգրտության անհրաժեշտ մակարդակը՝ բացառելով անհամադրելի տվյալները և հնարավոր սխալները: Արտադրատեսակների այսպիսի ընտրանքն ապահովում է դրանց անհրաժեշտ ներկայացուցչականությունը, ինչը հնարավորություն է տալիս ավելի հիմնավորված բացահայտել գների ազդեցությունն արտադրության ծավալների ընդհանուր փոփոխությունների վրա:

*Ինդեքսի թույլատրելի վերին և ստորին սահմանները որոշվում են առանձին արտադրատեսակների գների միջին քառակուսային շեղումների և դրանց հիման վրա հաշվարկված տատանման (վարիացիոն) գործակիցների օգնությամբ (միջոցով):*

Մասնավորապես արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման համար սահմանային գործակիցների հաշվարկներն իրականացվում են օգտագործելով արտադրատեսակների 12 ամիսների քանակային, գնային ցուցանիշները, միջին քառակուսային շեղումները, տատանման գործակիցները և դրանց միջինները:

Հիմք ընդունելով բազիսային տարվա տվյալները, սահմանային գործակիցները հաշվարկվում են հետևյալ կարգով.

- հաշվարկվում է առանձին արտադրատեսակների գների (12 ամիսներով) տատանման գործակիցը հետևյալ բանաձևով.

$$\text{var}_l = \frac{\sigma_l}{X_l} * 100,$$

որտեղ  $\text{var}_l$  -  $l$ -րդ արտադրատեսակի տատանման գործակիցն է,

$\overline{X}_l$  -  $l$ -րդ արտադրատեսակի (12 ամիսներով) միջին կշռված գինն է և որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\overline{X}_l = \frac{\sum_{t=1}^{12} p_{tl} q_{tl}}{\sum_{t=1}^{12} q_{tl}},$$

որտեղ  $p_{tl}$  - բազիսային տարվա  $t$ -րդ ամսում  $l$ -րդ արտադրատեսակի գինն է,

$q_{tl}$  - բազիսային տարվա  $t$ -րդ ամսում  $l$ -րդ արտադրատեսակի քանակն է,

$\sigma_l$  -  $l$ -րդ արտադրատեսակի գների միջին քառակուսային շեղումն է և որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\sigma_l = \sqrt{\frac{\sum_{t=1}^n (p_{tl} - \overline{X}_l)^2}{n}}, n = 1..12$$

- հաշվարկվում է միջին տատանման գործակից՝ ըստ առանձին արտադրատեսակների տատանման գործակիցների հետևյալ բանաձևով.

$$\overline{VAR} = \frac{\sum \text{var}_l}{l}, \text{var}_l \neq 0,$$

որտեղ  $\overline{VAR}$  - միջին տատանման գործակիցն է,

$\text{var}_l$  -  $l$ -րդ արտադրատեսակի տատանման գործակիցն է,

$l$  - արտադրատեսակների քանակն է,

- ինդեքսների շարքի վերին և ստորին սահմանային արժեքները հաստատվում են սահմանափակելով դրանք եռակի ստանդարտ շեղման մեծության միջակայքով: Արտադրատեսակների ընտրանքի վերջին փուլում վերին և ստորին սահմանները, արտահայտված տոկոսներով, որոշվում են հետևյալ բանաձևերով.

$$\overline{VAR}_{max} = (\overline{VAR} * 3) + 100$$

$$\overline{VAR}_{min} = (100 : \overline{VAR}_{max}) * 100:$$

Օրինակ՝ (տվյալները պայմանական են), եթե միջին տատանման գործակիցն ըստ առանձին արտադրատեսակների տատանման գործակիցների հավասար է՝  $\overline{VAR} = 34.256$ , ապա ինդեքսների շարքի վերին և ստորին սահմանային արժեքները համապատասխանաբար կլինեն՝

$$\overline{VAR}_{max} = (34.256 * 3) + 100 = 202.768\%$$

$$\overline{VAR}_{min} = (100 : \overline{VAR}_{max}) * 100 = 49.317\%$$

- $VAR_{max} < I_{t,l} > VAR_{min}$  պայմանին բավարարող արտադրատեսակները մասնակցում են հետագա կշիռների և ինդեքսների հաշվարկին:

## 5. ԱԳՐԵԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿՇՈՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման համար ձևավորվում է կշիռների համակարգ: Այն ենթակա է փոփոխման արդյունաբերության ճյուղերում կառուցվածքային էական տեղաշարժեր արձանագրվելու պարագայում (դեպքում):

Ագրեգացման տարբեր մակարդակներում ցուցանիշների կշռման համակարգը ձևավորվում է երկու փուլով: Առաջին փուլում օգտագործվում են արտադրանքների ծավալներն ըստ արտադրանքի դասակարգչի ըստ գործունեության տեսակների (այսուհետ՝ ԱԴԳՏ), իսկ երկրորդ փուլում՝ արդյունաբերական արտադրանքի ծավալներն ըստ ՏԳՏՀԴ-ի ստորակարգության՝ դաս, խումբ, հատված, ենթաբաժին, բաժին և որպես հանրագումար՝ ամբողջ արդյունաբերության աստիճանների:

Արտադրանքը՝ ընտրված միանման արտադրատեսակների համախումբ է, որի ծավալը նրա մեջ մտնող արտադրատեսակների բազիսային տարվա արտադրության ծավալների (գնի և քանակի արտադրյալի) հանրագումարն է.

$$V_j = \sum v_l,$$

որտեղ  $V_j$  -  $j$ -րդ արտադրանքի արտադրության ծավալն է,

$v_l$  -  $l$ -րդ արտադրատեսակի արտադրության ծավալն է:

ԱԴԳՏ-ի յուրաքանչյուր դաս մակարդակի ծավալը՝ նրա մեջ մտնող արտադրանքների ծավալների հանրագումարն է, իսկ յուրաքանչյուր արտադրանքի կշիռը՝ նրա ծավալի տոկոսային արտահայտությունն է տվյալ դասի մեջ.

$$V_i = \sum V_j,$$

$$w_j = \frac{V_j}{V_i} \%,$$

որտեղ  $V_i$  -  $i$ -րդ դասի արտադրության ծավալն է,

$V_j$  -  $j$ -րդ արտադրանքի արտադրության ծավալն է,

$w_j$  -  $j$ -րդ արտադրանքի կշիռն է  $V_i$ -րդ դասի մեջ:

ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի կողմից վիճակագրական ընտրանքային հետազոտությունների արդյունքում ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի մշակվում են «Արդյունաբերական արտադրանքի ծավալն ընթացիկ և համադրելի գներով ըստ գործունեության տեսակների» տարեկան ամփոփ տվյալներ: Օգտագործելով արտադրանքների հաշվարկված կշիռները, կատարվում է ՏԳՏՀԴ-ի համապատասխան մակարդակը կազմող արտադրանքների ծավալների վերահաշվարկ, որոնց հանրագումարը տարբեր խմբավորումներով համապատասխանում է ՏԳՏՀԴ-ի ստորակարգության դաս, խումբ, հատված, ենթաբաժին, բաժին և ամբողջ արդյունաբերության աստիճանների ծավալներին:



**Օրինակ՝ (տվյալները պայմանական են)**

| Դասի՝ ըստ ՏԳՏՀ-ի և արտադրանքի՝ ըստ ԱԴԳՏ-ի ծածկագիրը | Արտադրանքի ծավալը ԱԴԳՏ-ի դասի մեջ (դրամ) | Արտադրանքի կշիռը ԱԴԳՏ-ի դասի մեջ (%) | Արտադրանքի վերահաշվարկված ծավալը ՏԳՏՀ-ի դասի մեջ (դրամ) |
|---|--|--------------------------------------|---|
| 15.11   | <b>36371199</b>                          | <b>100.0</b>                         | <b>56784121</b>   |
| 15.11.11.400  | 8561846.0                                | 23.54018                             | 13367084  |
| 15.11.11.410  | 17239934.0                               | 47.39996                             | 26915651  |
| 15.11.11.420  | 5890777.0                                | 16.19627                             | 9196910   |
| 15.11.11.900  | 4678642.0                                | 12.86359                             | 7304476   |

Ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի ստորակարգության աստիճանների՝ կշիռները ձևավորվում են նրանց մեջ մտնող արտադրանքների տեսակարար կշիռների գումարից .

$$W_{r_m} = \sum w_j, m = 1..6,$$

որտեղ  $W_{r_m}$  - ստորակարգության  $r_m$  -րդ աստիճանի կշիռն է և  $\sum W_{r_m} = 100$  (անհրաժեշտ պայման),

$r_m$  - ՏԳՏՀ-ի դաս, խումբ, հատված, ենթաբաժին, բաժին և ընդամենը՝ ՀՀ ստորակարգության որևէ աստիճանն է,

$w_j$  -  $j$  -րդ արտադրանքի տեսակարար կշիռն է  $W_{r_m}$  ստորակարգության  $r_m$  -րդ աստիճանի մեջ:

Կշիռների հաշվարկման ժամանակ հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի որոշ դասերով, որոնք ձևավորվում են հետազոտվող արտադրատեսակներով, չեն ձևավորվում արտադրության ծավալներ (ըստ արդյունաբերության վիճակագրության բաժնի տվյալների): Այդպիսի դեպքեր ի հայտ են գալիս, երբ կազմակերպությունը բացի իր հիմնական գործունեության տեսակից թողարկում է (կամ արտադրում է) այնպիսի արտադրատեսակներ, որոնք իրենց բնույթով համապատասխանում են ՏԳՏՀ-ի այլ դասերի, որոնցում որպես հիմնական գործունեության տեսակ այլ կազմակերպություններ ներկայացված չեն:

**6. ԱՐԴՑՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆԵՐԻ ԻՆՂԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿ**

Գների ինդեքսի հաշվարկը կարող է իրականացվել 2 մեթոդով՝ բազիսային և շղթայական:

*Բազիսային մեթոդը* ընթացիկ ամսվա գնի հարաբերությունն է բազիսային անփոփոխ գնին: Որպես բազիսային գին կարող է ընտրվել արտադրատեսակի ցանկացած ամսվա (տարվա) գինը (օրինակ՝ նախորդ տարվա կամ ցանկացած նախորդող տարվա դեկտեմբերը): Բազիսային մեթոդով գների ամսական ինդեքսը որոշվում է ընթացիկ ժամանակաշրջանի բազիսային ինդեքսը բաժանելով նախորդ ժամանակաշրջանի բազիսային ինդեքսին: Որպես կանոն, գների ինդեքսի հաշվարկման բազիսային մեթոդը կիրառվում է կայուն տնտեսական պայմաններում, մի քանի տարի անընդմեջ արտադրվող արտադրատեսակների գների գրանցման պարագայում:

*Շղթայական մեթոդի* հաշվարկման ժամանակ ամսական ինդեքսը որոշվում է ընթացիկ ամսվա գնի հարաբերությամբ նախորդ ամսվա գնին: Երկարատև ժամանակաշրջանի համար շղթայական ինդեքսը որոշվում է ամսական գների ինդեքսների բազմապատկման ճանապարհով: Եվ, որպես կանոն, այս մեթոդը կիրառվում է անկայուն արտադրության, արտադրվող արտադրատեսակների հաճախակի փոփոխման, դիտարկվող արտադրատեսակների որակական փոփոխությունների ժամանակ:

Արդյունաբերության ոլորտում կառուցվածքային և թողարկվող արտադրատեսակների տեսականու արագ փոփոխությունների պարագայում արտադրողների գների ինդեքսի հաշվարկը նպատակահարմար է իրականացնել շղթայական մեթոդով՝ հիմնվելով հաշվարկվող ամսական գների ինդեքսների վրա:

Ինդեքսների հաշվարկն իրականացվում է Լասպեյրեսի բանաձևով ամսական պարբերականությամբ ըստ ԱԴԳՏ-ի՝ արտադրանք և ըստ ՏԳՏՀԴ-ի՝ դաս, խումբ, հատված, ենթաբաժին, բաժին և ընդամենը՝ ՀՀ ագրեգացման մակարդակների:

6.1 ԳՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՆԱԽՈՐԴ ԱՄՍՎԱ ՆԿԱՏՄԱՄԲ

Արտադրանքի միջին գինը ձևավորվում է նրա մեջ մտնող արտադրատեսակների միջին երկրաչափականից.

$$P_j = \sqrt[l]{p_1 p_2 p_3 \dots p_l} :$$

Յուրաքանչյուր ամիս գնային տեղեկատվություն չունեցող արտադրատեսակների համար հաշվարկվում է գների փոփոխության գործակից, որի հիման վրա էլ՝ «գնահատված կամ հաշվարկային գին»: Հաշվարկվող ժամանակաշրջանի համար արտադրանքի կազմում գնային տեղեկատվություն ունեցող բոլոր արտադրատեսակների ( $p_{it} \neq 0$ ) և դրանց համապատասխան նախորդ ժամանակաշրջանի արտադրատեսակների ( $p_{(t-1)l}$ ) համար տատանման գործակցի բանաձևը հետևյալն է.

$$K = \frac{\sqrt[l]{p_{t1} p_{t2} p_{t3} \dots p_{tl}}}{\sqrt[l]{p_{(t-1)1} p_{(t-1)2} p_{(t-1)3} \dots p_{(t-1)l}}},$$

որտեղ  $K$  - տատանման գործակիցն է,

$p_{it} - l$ -րդ արտադրատեսակի գինն է ընթացիկ՝  $t$ -րդ ժամանակաշրջանում,

$p_{(t-1)l} - l$ -րդ արտադրատեսակի գինն է նախորդ՝  $(t-1)$ -րդ ժամանակաշրջանում:

Նույն արտադրանքի կազմում յուրաքանչյուր արտադրատեսակի բացակա գինը ( $p_{it} = 0$ ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$p_{it} = p_{(t-1)l} * K :$$

Օրինակ՝ (տվյալները պայմանական են)

| արտադրանքի ծածկագիրը | արտադրատեսակի ծածկագիրը | արտադրատեսակի անվանումն ըստ ԱԴԳՏ-ի | չափի միավոր | փետրվար $P_{(t-1)l}, l=1..6$ | մարտ $P_{it}, l=1..6$ | վերահաշվարկված գներ |
|----------------------|-------------------------|------------------------------------|-------------|------------------------------|-----------------------|---------------------|
| 24.51.32.570         | 24.51.32.570.1.01       | Մաքրող միջոց «Ժեմչուգ», 0.5կգ      | կգ          | 330.0 ( $p_{2,1}$ )          | 350.0 ( $p_{3,1}$ )   |                     |
|                      | 24.51.32.570.1.02       | Մաքրող միջոց «Ժեմչուգ», 0.9կգ      | կգ          | 311.0 ( $p_{2,2}$ )          | 0.0 ( $p_{3,2}$ )     | 328.07              |
|                      | 24.51.32.570.1.03       | Մաքրող միջոց «Բլանշ»               | կգ          | 166.7 ( $p_{2,3}$ )          | 177.0 ( $p_{3,3}$ )   |                     |
|                      | 24.51.32.570.1.04       | Մաքրող միջոց «Մերի»                | կգ          | 437.7 ( $p_{2,4}$ )          | 0.0 ( $p_{3,4}$ )     | 461.73              |
|                      | 24.51.32.570.1.05       | Մաքրող սպասք լվացող հեղուկ         | կգ          | 243.5 ( $p_{2,5}$ )          | 265.5 ( $p_{3,5}$ )   |                     |
|                      | 24.51.32.570.1.06       | Լվացքի փոշի «Բարֆ»                 | կգ          | 358.9 ( $p_{2,6}$ )          | 362.0 ( $p_{3,6}$ )   |                     |

$$p_{it} \neq 0, \sqrt[4]{350.0 * 177.0 * 265.5 * 362.0} = 277.78$$

$$\Rightarrow K = \frac{277.78}{263.32} = 1.0549$$

$$p_{(t-1)}, \sqrt[4]{330.0 * 166.7 * 243.5 * 358.9} = 263.32$$

$$p_{3,2} = p_{2,2} * K = 311 * 1.0549 = 328.07,$$

$$p_{3,4} = p_{2,4} * K = 437.7 * 1.0549 = 461.73:$$

Արտադրանք մակարդակի գների ինդեքսը՝ ընթացիկ ամսվա արտադրանքի միջին գնի հարաբերությունն է նախորդ ամսվա միջին գնին.

$$I_{(t/t-1)j} = \frac{P_{ij}}{P_{(t-1)j}} \%,$$

որտեղ  $I_{(t/t-1)j}$  -  $j$ -րդ արտադրանքի գնի ինդեքսն է ընթացիկ ժամանակաշրջանը նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ՝  $(t/t-1)$ ,

$P_{ij}$ ,  $P_{(t-1)j}$  -  $j$ -րդ արտադրանքի միջին գինն է ընթացիկ՝  $t$  և նախորդ՝  $(t-1)$  ժամանակաշրջաններում:

Բազիսային տարվա հունվար ամսվա գների ինդեքսի հաշվարկն իրականացվում է բազիսային տարվա միջին գների նկատմամբ:

## 6.2 ԳՆԵՐԻ ԱՄՓՈՓ ԻՆԴԵՔՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ՆԱԽՈՐԴ ԱՄՍՎԱ ՆԿԱՏՄԱՄԲ

Ըստ ՏԳՏՀԴ-ի ստորակարգության դաս, խումբ, հատված, ենթաբաժին, բաժին և ընդամենը՝ ՀՀ մակարդակներում գների ամփոփ ինդեքսները ձևավորվում են նրանց մեջ մտնող արտադրանքների տեսակարար կշիռների և գների ինդեքսների միջոցով, հետևյալ բանաձևով՝

$$I_{(t/t-1)r_m} = \frac{\sum_{n=1}^j (w_j * I_{(t/t-1)j})}{\sum_{n=1}^j w_j}, m = 1..6 \text{ (ստորակարգության աստիճան),}$$

որտեղ  $I_{(t/t-1)r_m}$  - ստորակարգության  $r_m$ -րդ աստիճանի ինդեքսն է,  $t$ -րդ ընթացիկ ժամանակաշրջանը  $(t-1)$  նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ,

$w_j$  -  $j$ -րդ արտադրանքի տեսակարար կշիռն է  $W_{r_m}$  ստորակարգության  $r_m$ -րդ աստիճանի մեջ,

$I_{(t/t-1)j}$  -  $j$ -րդ արտադրանքի ինդեքսն է,  $t$ -րդ ընթացիկ ժամանակաշրջանը  $(t-1)$  նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ:

Եթե արտադրանքի միջին գնի ամսական ինդեքսը հավասար է զրոյի ( $I_{(t/t-1)j} = 0$ ), ապա դրա փոխարեն օգտագործվում է այն ստորակարգության աստիճանի ամսական գնի ինդեքսը, որի մեջ մտնում է զրոյական ինդեքս ունեցող արտադրանքը՝

$$I_{(t/t-1)j} = I_{(t/t-1)r_m},$$

իսկ արտադրանքի կազմի մեջ մտնող բոլոր արտադրատեսակների բացակա գների վերահաշվարկն իրականացվում է նույն ստորակարգության աստիճանի ամսական ինդեքսի օգնությամբ՝

$$p_{it} = p_{(t-1)t} * (I_{(t/t-1)r_m} / 100):$$

Եթե ՏԳՏՀԴ-ի ստորակարգության որևէ աստիճանի ամսական գների ինդեքսը հավասար է զրոյի ( $I_{(t/t-1)r_m} = 0$ ), ապա կատարվում է ետհաշվարկ մինչև բացակա արտադրատեսակի մակարդակը՝ օգտագործելով այն ստորակարգության աստիճանի ամսական գների ինդեքսը ( $I_{(t/t-1)r_{(m+1)}}$ ), որի մեջ մտնում է տվյալ զրոյական ստորակարգության մակարդակը.

$$I_{(t/t-1)r_m} = I_{(t/t-1)r_{(m+1)}}, P_{it} = P_{(t-1)t} * (I_{(t/t-1)r_{(m+1)}} / 100) :$$

### 6.3 ԳՆԵՐԻ ԱՄՓՈՓ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Գների ինդեքսների հաշվարկը տարբեր բազիսային ժամանակահատվածների նկատմամբ իրականացվում է գների ամսական ինդեքսների հիման վրա հետագոտվող ամբողջ ժամանակաշրջանում բերված միասնական բազայի և հաշվարկված կշիռների միասնական կառուցվածքով: Այսպես, նախորդ տարվա նկատմամբ հաշվետու տարվա գների ինդեքսների համադրելիության համար անհրաժեշտ է երկու հարակից տարիների համար ունենալ գների ամսական ինդեքսների շարք, հաշվարկված միասնական բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ:

Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը հաշվարկում է նաև.

- ամենամսյա շրթայական ինդեքսներ բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,
- յուրաքանչյուր ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ,
- ընթացիկ ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական կարգով),
- յուրաքանչյուր ամիսը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,
- եռամսյակային ինդեքսներ:

Ամենամսյա գների շրթայական ինդեքսը բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ որոշվում է գների ամսական ինդեքսների շրթայական բազմապատկման ճանապարհով.

$$I_{(t/o)} = (I_{(t-1/o)} * I_{(t/t-1)})\% ,$$

որտեղ  $I_{(t/o)}$  - ընթացիկ ամսվա  $t$  գների շրթայական ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,

$I_{(t-1/o)}$  - նախորդ ամսվա  $(t - 1)$  գների շրթայական ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,

$I_{(t/t-1)}$  - ընթացիկ ամսվա գների ինդեքսն է նախորդ ամսվա նկատմամբ:

Յուրաքանչյուր ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ գների ինդեքսը հաշվետու տարվա  $t$ -րդ ամսվա գների շրթայական ինդեքսի (բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ) հարաբերությունն է նախորդ տարվա համապատասխան ամսվա գների շրթայական ինդեքսին.

$$I_{t/t^{(T-1)}} = \frac{I_{(t/o)^T}}{I_{(t/o)^{(T-1)}}} \% ,$$

որտեղ  $I_{t/t^{(T-1)}}$  - հաշվետու տարվա ընթացիկ ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ գների ինդեքսն է,

$I_{(t/o)^T}$  - հաշվետու տարվա ընթացիկ ամսվա գների շրթայական ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,

$I_{(t/o)^{(T-1)}}$  - նախորդ տարվա համապատասխան ամսվա գների շրթայական ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ:

Ընթացիկ ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական կարգով) գների ինդեքսը ընթացիկ ժամանակաշրջանի գների շղթայական ինդեքսների գումարի հարաբերությունն է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի գների շղթայական ինդեքսների գումարին:

$$I_{T/(T-1)} = \frac{\sum_{t=1}^{12} I_{(t/0)^T}}{\sum_{t=1}^{12} I_{(t/0)^{(T-1)}}} \%,$$

որտեղ  $I_{(T)/(T-1)}$  - ընթացիկ ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական կարգով) գների ինդեքսն է,

$\sum_{t=1}^{12} I_{(t/0)^T}$  - հաշվետու տարվա ընթացիկ ժամանակաշրջանի գների շղթայական ինդեքսների գումարն է,

$\sum_{t=1}^{12} I_{(t/0)^{(T-1)}$  - նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի շղթայական ինդեքսների գումարն է:

Յուրաքանչյուր ամիսը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ գների ինդեքսը հաշվետու տարվա  $t$ -րդ ամսվա գների շղթայական ինդեքսի հարաբերությունն է նախորդ տարվա դեկտեմբերի գների շղթայական ինդեքսին:

$$I_{t^T / dec^{(T-1)}} = \frac{I_{(t/0)^T}}{I_{(dec/0)^{(T-1)}}} \%,$$

որտեղ  $I_{t^T / dec^{(T-1)}}$  - հաշվետու տարվա  $t$ -րդ ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ գների ինդեքսն է,

$I_{(t/0)^T}$  - հաշվետու տարվա  $t$ -րդ ամսվա գների շղթայական ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,

$I_{(t/0)^{(T-1)}$  - նախորդ տարվա համապատասխան ամսվա գների շղթայական ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ:

Գների եռամսյակային ինդեքսների հաշվարկն իրականացվում է կշիռների միասնական համակարգով, բազիսային ժամանակաշրջանի (ընդունված որպես 100%) նկատմամբ հաշվարկված, գների ամենամսյա շղթայական ինդեքսներից ելնելով:

Գների եռամսյակային ինդեքսների հաշվարկման կարգը (օրինակով) բերվում է ստորև.

| Գների ամենամսյա շղթայական ինդեքսներ հաշվարկված բազիսային տարվա նկատմամբ |         |         |       |       |       |        |        |         |           |           |          | %         |
|---|---------|---------|-------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|
| Բազիսային տարին =100  | Հունվար | Փետրվար | Մարտ  | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
| 2007թ.  | 145.1   | 146.9   | 147.5 | 148.1 | 148.2 | 149.5  | 150.4  | 150.8   | 151.5     | 152.1     | 153.7    | 154.3     |
| 2008թ.  | 154.3   | 155.4   | 156.3 | 157.0 | 157.9 | 158.6  | 158.8  | 159.9   | 161.4     | 162.9     | 163.3    | 165.5     |

|   |  |
|---|--|
| - եռամսյակը բազիսային տարվա նկատմամբ  | $(148.1+148.2+149.5)/3=148.6\%$ ,<br>(2007թ. II եռամսյակ)  |
| - եռամսյակը նախորդ եռամսյակի նկատմամբ                                       | $\frac{(154.3+155.4+156.3)}{(152.1+153.7+154.3)} * 100 = 101.26\%$<br>(2008թ. I եռամսյակը 2007թ. IV եռամսյակի նկատմամբ)  |
| - եռամսյակը նախորդ տարվա համապատասխան եռամսյակի նկատմամբ                    | $\frac{(154.3+155.4+156.3)}{(145.1+146.9+147.5)} * 100 = 105.98\%$<br>(2008թ. I եռամսյակը 2007թ. I եռամսյակի նկատմամբ)   |
| - նախորդ տարվա նկատմամբ եռամսյակային կտրվածքով աճողական կարգով տարվա սկզբից | $\frac{(154.3+155.4+156.3+157.0+157.9+158.6)}{(145.1+146.9+147.5+148.1+148.2+149.5)} * 100 = 106.09\%$<br>(2008թ. հունվար-հունիսը 2007թ. հունվար-հունիսի նկատմամբ) |

## 7. ԳՆԵՐԻ ԻՆՂԵՔՍՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Գների ինդեքսների հրապարակումը նախատեսվում է իրականացնել ամսական պարբերականությամբ, հետևյալ կտրվածքներով.

- ընդամենը ՀՀ, այդ թվում՝
- հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում (B),
- մշակող արդյունաբերություն (C),
- էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (D),
- ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում (E),
- անհրաժեշտության դեպքում՝ մինչև 4 նիշ մակարդակով:

*ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության  
գների վիճակագրության և միջազգային  
համադրումների բաժին*